ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ և ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-AM

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆԺԵՆԵՐ (ՄԱՍՆԱԿԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔ)

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-4.1.5

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:
Ծրագրի զարգացման նպատակն է ուժեղացնել կառավարության կարողությունները՝ ընկերություններին արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և որակի կառավարման ծառայությունների մատուցման ոլորտում:
Ծրագրի ընդհանուր համակարգումը կիրականացվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ Ծրագրի կառավարման գրասենյակի միջոցով: Ծրագրի կառավարման գրասենյակը համակարգելու է միջոցառումները ամենօրյա կտրվածքով, այդ թվում նաև համապատասխան իրականացնող գերատեսչությունների հետ հաղորդակցությունը և Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը:

Ծրագրի շրջանակներում կֆինանսավորվեն Ակրեդիտացման ազգային մարմնի (ԱԱՄ) և Չափագիտության ազգային ինստիտուտի (ՉԱԻ) շենքերի, այդ թվում նաև ՉԱԻ-ի վերանորոգման և լաբորատոր սարքավորումների ձեռք բերման աշխատանքները, նաև փոքրածավալ շինարարական և հավանաբար վերականգնման աշխատանքներ կիրականացվեն արդեն իսկ գոյություն ունեցող շենքերում:
Այս հանձնարարականի նպատակն է համակարգել և վերահսկել շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում են Ծրագրի շրջանակներում՝ որպես անհատ խորհրդատու (հետայսու՝ Խորհրդատու) Ինժեների ընտրության միջոցով՝ ապահովելով ժամանակին, արդյունավետ և էֆեկտիվ իրականացում:

Խորհրդատուն ծառայություններ կմատուցի սկզբնական 1 տարի ժամկետով: Գոհացուցիչ կատարողականի դեպքում պայմանագիրը կարող է երկարացվել:

Ուստի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը եւ ՀՀ ֆինանսների նախարարության "Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն" ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին («Խորհրդատուներ») ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Որակավորման պահանջներ

Հանձնարարականի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որը պետք է ունենա՝

- Բարձրագույն կրթություն շինարարական-ինժեներական ոլորտում,
- Շինարարական աշխատանքների և մասնագիտական որակավորում վերջիններիս իրականացման գործում:
- Շինարարական աշխատանքների կազմակերպման և վերջիններիս վերահսկման առնվազն 5 տարվա փորձ: ՀԲ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացման փորձը կդիտարկվի որպես առավելություն:
- Շինարարական աշխատանքներին և քաղաքաշինությանը վերաբերող ՀՀ օրենսդրության իմացություն:
- Համակարգչային սարքավորումներից օգտվելու բավարար հմտություններ:
- Գերազանց կազմակերպչական և հաղորդակցական հմտություն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների (Խորհրդատուների ուղեցույց) 1.9. պարբերությանը, որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն

եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2015 թ. դեկտեմբերի 3-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am